

Հայաստանի քրեակատարողական հիմնարկների վերաբերյալ զեկույցը հանրությանն է ներկայացվել Երևանում

ԵՐԵՎԱՆ, 5 հոկտեմբերի, 2006- 2005 թ. հայաստանյան բանտերի վերահսկողության արդյունքները, բանտարկյալների վիճակը և վերաբերմունքը նրանց նկատմամբ այսօր հանրությանն են ներկայացվել Երևանում:

Պատրաստված լինելով հանրային վերահսկողության խմբի կողմից՝ զեկույցը առանձնահատուկ ուշադրության է արժանացնում կալանավորներին տրամադրվող բժշկական ծառայություններին և ուտելիքին, որ ստանում են, հոգեբանական խնդիրներին, արտաքին աշխարհի հետ կապին, ամենօրյա զբոսանքին, ինչպես նաև խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կանխարգելմանը, բանտի անձնակազմին:

Խումբը, որին աջակցում է ԵԱՀԿ-ն, ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության ներքո՝ վերահսկելու կալանավորվածների իրավունքները

«Այս տարվա զեկույցը մեծ քայլ է հանրային վերահսկողության խմբի կողմից, քանի որ այն տալիս է առավել ստույգ փաստեր, առաջարկություններ և վերլուծություններ», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մարդու իրավունքների գծով պատասխանատու Սիլվիա Պոգոլսան: «Ես նաև ողջունում եմ այն կառուցողական համագործակցությունը, որ ցուցաբերում է ՀՀ արդարադատության նախարարությունը՝ համապատասխան արձագանք տալով և խմբի կողմից արված շատ առաջարկություններ հաշվի առնելով»:

Հանրային վերահսկման խմբի ղեկավար Միքայել Բաղդասարյանը ավելացրեց. «Մեր մոնիթորինգը բացահայտեց, որ նախարարությունը կատարել է 2004թ. զեկույցում ներկայացված մեր առաջարկությունների մի մասը: Հուսով ենք, որ այն խնդիրները, որոնք մենք բարձրացրել ենք այս զեկույցում նույնպես կարժանանան համապատասխան ուշադրության և կօգնեն բարելավելու բանտարկյալների պայմանները»:

Միջոցառմանը ներկայացվեց նաև հասարակական կազմակերպությունների համար նախատեսված ազատագրկման վայրերի վերահսկողության վերաբերյալ գործնական ձեռնարկ, որ պատրաստվել է Խոշտանգումների կանխարգելման միությունը ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի /ԺՀՄԻԳ/ հետ համատեղ: Գիրքը թարգմանվել է հայերեն ԵԱՀԿ գրասենյակի և ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի հիմնադրամը աջակցություն են ցուցաբերում Հանրային վերահսկման խմբի աշխատանքներին 2004թ-ից: